ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

29 հունիս, 2026 թվականի № 51-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ ԱՄԵՐԻԿԱ» ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ ԵՎ ՕԳՈՍՏՈՍ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՂՈՐԴԱՑԱՆՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) գործադիր տնօրենի կողմից 2026 թվականի հունիսի 12-ին Հանրային հեռարձակողի խորհրդին ներկայացված N ՀՄ-02/328/26 գրությունը և հաշվի առնելով Ընկերության կողմից հեռարձակման ենթակա տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման անհրաժեշտությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Ընկերության «Առաջին ալիք Ամերիկա» տեսալսողական ծրագրի՝ 2026 թվականի հուլիս և օգոստոս ամիսների ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը՝ համաձայն սույն որոշման № 1 հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշմամբ նախատեսված ժամանակահատվածում Ընկերությունն իրավասու է ուղիղ եթերով հեռարձակել կարևոր իրադարձությունների վերաբերյալ՝ սույն որոշմամբ հաստատված հաղորդացանցով չնախատեսված տեսալսողական հաղորդումներ:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

29 հունիս, 2026 թվականի

ք. Երևան